ՅՈԼՅԱՆ
ՀՀ ԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

13.09.2024 N 02-426

«ԱԳԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
(Վեդի, Վանաշեն, Ա. Թովմասյան
էլ. փոստ 33gnumner2020@mail.ru )

ՈՐՈՇՈՒՄ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային աճուրդի միջոցով կազմակերպված «ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/66» ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ գնման ընթացակարգ/ շրջանակներում թիվ 1,2,3,4,12,13,14,15,16,17,18,19,20 չափաբաժինների մասով առաջին տեղ է զբաղեցրել «ԱԳԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«ԱԳԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել էին որոշակի անհամապատասխանություններ. մասնավորապես՝ դիմում հայտարարությունը /հավելված 1/ հաստատված չի եղել էլեկտրոնային ստորագրությամբ, բացակայել է հավելված 1.3-ը /իրական շահառուների վերաբերյալ հայտարարության ձև/, թիվ 1,2,3,4,12,13,14,15,16,17,18,19,20 չափաբաժինների մասով բացակայել է առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը /ֆիրմային անվանում, ապրանքային նշան, մակնիշ, արտադրողի անվանում, տեխնիկական բնութագիր/:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 41-րդ

հոդվածի պահանջով, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: «ԱԳԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել շտկված փաստաթղթերը, և համաձայն կարգի 42-րդ հոդվածի պահանջներին, մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Հիմք ընդունելով ***«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,»*** ենթակետի պահանջները, ընդունվում է որոշում ***«ԱԳԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ***-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Կատարող՝ գնումների համակարգող*
*Դ. Մադոյան, հեռ.+374 93 02 34 01*